

նուրի յաւարի զամենայն կարաւանն Պարսից. եւ զամենայն զաւրս Պարսից բազմութեանն կոտորեցին, եւ առին աւար բազում ի բանակէն՝ զի ոչ գոյր լոցա թիւ: 7 Ասպատակ տուեալ առնուին զամենայն Ատրպայական երկիրն. քանդեալ բրէին զերկիրն, մինչեւ ի հիմանց կործանէին. եւ խաղացուցանէին զգերութիւն երկիրն քան զաստեղս բազմութեամբ: 8 Եւ զամենայն զայր երկիրն հանէին ընդ սուր. եւ ինքեանք զգուշացեալք սահմանաւք երկրին իւրեանց, պահ արկեալ պահէին մեծաւ զգուշութեամբ:

ԳԼՈՒԽ ԻԶ.

1 Յաղագս Վնայ պարսկի եւ չորեքհարիւր հազարացն՝ որ եկեալ էին ի վերայ Յայոց, եւ նկուն լինէին ի զաւրացն Յայոց:

2 Ապա գումարեաց թագաւորն Պարսից Շապուհ զՎինն ի վերայ արքային Յայոց Արշակայ չորեքհարիւր հազարաւ: 3 Ապա զայր ելաներ Վինն, ասպատակ սկիւր ընդ ամենայն երկիրն սահմանացն Յայոց: 4 Եւ ապա իբրեւ գիտացեալ թագաւորն Յայոց Արշակ, հասանէին ի վերայ զաւրացն Պարսից. կոտորեալ առ հասարակ ընդ սուր հաներ զամենայն զաւրսն Պարսից, եւ զմնացեալսն փախստական առնէր մինչեւ ի կողմանս սահմանացն Պարսից: 5 Սատակէին զնոսա, եւ ինքեանք դարձեալ ունէին զճակատուն տեղի:

ԳԼՈՒԽ ԻԷ.

1 Յաղագս զաւրավարին Պարսից Անդիկանայ, որ քառասուն բիւրուն հասանէր՝ աւար առնուլ զերկիրն Յայոց. թէ զհա՛րո՞ Վասակ սպարապետն Յայոց ելաներ ընդ առաջ Նորա երկոտասան բիւրու, հարկաներ զնա եւ զզաւրս Նորա:

2 Ապա յետ այսորիկ առաքէր արքայն Պարսից ի վերայ արքային Յայոց գունդ կազմեալ պատրաստեալ արս ընդիրս պատերազմողս իւր եւ զքառասուն բիւր, զալ առնուլ այրել ակերել զերկիրն Յայաստան, եւ Անդկան զաւրագլուխ լոցա զայր հասանէր ասպատակ առնէր յերկիրն Յայոց: 3 Ապա զայր հասանէր ընդ առաջ Նորա Վասակ Մամիկոնեան սպարապետն Յայոց երկոտասան բիւրուք. հարկաներ սատակէր զնա եւ զզաւրս Նորա, թափէր զզարդ լոցա, եւ ոչ ապրեցուցանէր մի ի լոցանէ եւ ոչ մի. եւ ինքն կայր քաջութեամբ ունելով զճակատուն տեղի: